ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 09.02.2024թ. հ.109 գրության՝ քաղաքացի Անդրանիկ Արշակյանի դիմումի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Արաբկիր վարչական շրջանի Ա. Ավետիսյան փողոցի հ. 70/1 հասցեում գտնվող կաթսայատունը դեռևս 2005 թվականից, վարձակալության իրավունքով, տրամադրված է եղել «ԵՐՖՐԵԶ» ԲԲ ընկերությանը: Հետագայում «ԵՐՖՐԵԶ» ԲԲ ընկերությունը ճանաչվել է սնանկ, որի շրջանակներում, սնանկության կառավարչի կողմից հայտարարված աճուրդով, գույքը փոխանցվել է Սոկրատ Գրիգորյանին՝ ում հետ Երևանի քաղաքապետարանը կնքել է վարձակալության պայմանագիր՝ 50 տարի ժամկետով:

Այս պահի դրությամբ կաթսայատունը քանդելու կամ տեղում այլ շինություն կառուցելու վերաբերյալ որևէ դիմում Երևանի քաղաքապետարան մուտքագրված չէ:

Դիմումատուն տարբեր դիմումներով անդրադարձել է նաև կաթսայատան գույքին և դրա տեղաշարժին: Տեղեկացվում է, որ նշված գույքը ոչ թե Երևան համայնքի, այլ վարձակալի սեփականությունն է և վերջինիս իրավունքն է իր ցանկությամբ տիրապետելու և օգտագործելու այն:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացվում է, որ Ա. Ավետիսյան փողոցի հ. 70/1 հասցեում գտնվող կաթսայատունը տնօրինվում է օրինական հիմքերով՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման, կնքված պայմանագրի և պետական գրանցման համաձայն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ